


ՎԵՍՊԵՐ

ՎԵՑ ԿՐԿԼԱՏ



ՀԱՅԿԱՆ

ՅՅԻ-ՅՅՎ.

Վ-47

W

ՎԵՍՊԵՐ

2011-07

ՎԵՑ ՀԱՐՎԱԾ

(ՎԻՊԵՐԳ)

Նկարները
Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ

ԳԳԳ
ԳԳ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

9 AUG 2013

13157




1377
40

ВЕСПЕР
ШЕСТЬ УДАРОВ

Гиз. Арм. ССР, Ереван, 1940 г

... Սառու-Շիլդսի Պիսեր
Պարկեսն այն տասնրիկնգ հազար
անգլիացի յերեխաներից է, վորոնք
շարունակ յենթարկվում են այդ
բարբարոս պատժին:

Թերթերից



1

Մտամոլոր ու տխրագեմ՝
Պիտերն առավ պայուսակն իր,
Պետք է դառնար նա տուն արդեն.
Գուցե շերտ մի հաց ու պանիր
Մայրիկը տար այսոր իրեն,—
Մտածեց նա յերանորեն...

Առավոտյան նա խոստացավ,
Իրեն քաղցած ճամբեց դպրոց,
Բայց ճարահատ՝ խիստ լաց յեղավ
Խուլ տնակում անձրեվակոծ.
Զե՞ փոր դատարկ հին դարակում
Միայն մկներն եյին պարում:

Յեվ հայրիկին խեղճ Պիտերի՝
Զրկել էյին աշխատանքից,
Մատնել էյին քաղցի սրին
Տերերը ժանտ ու անհոգի.
Դատարկ ձեռքով՝ ինչպես դար տուն,
Յեվ ի՞նչ ասեր սոված վորդուն...

Վոչինչ չասաց Պիտերն իր մոր,
(Սյդ կապուտաչ, խելոք տղան),
Նայեց նրա դեմքին անդոր,
Յեվ աչքերին՝ թախծոտ այնքան:

Թե ունենար մայրիկը հաց
Յեվ կամ շերտ մի գոնե յերշիկ՝
Իրեն կտար նա անկասկած
Ու կեր, — կասեր, — իմ լսվ բալիկ...


Իսկ եզվաճրղը... միթե՞ նա յեւ
Հիմի քաղցած ե իր նման,
Ու չե՞ կարող դաս սովորել —
Նստած տաքուկ իրենց նոր տան:

Բայց Պիտերը արդեն հիշեց
Վաճառատունն այն գեղեցիկ,
Հացերն հիշեց բուրյան ու մեծ,
Յեվ նրա հորն ահազգեցիկ...

Հիմի նրանց ճոխ սեղանին
Մեղր ու կարագ ու պանիր կա,
Բուլկի ունեն նրանք կրկին,
Յեվ սարի չափ դիզված շաքար...

.

Մայրիկի մոտն արի, տղաս, —
Լսվեց միայն բարակ մի ձայն,
Ընդհատելով մանկան յերազն
Յեվ դառնազին, յեվ դյուլթական:



Յեւ Պիտերը ննջեց խռով՝
Իրած գլուխն իր մոր ծնկան,
Պատառ մի հանց յերագելով՝
Մթնշաղում՝ անողնական...

3

Իրսում թնդաց խոնավ քամին,
Ծովը ծեծեց ափերն արագ,
Խոնչ ե անում այս ուշ ժամին
Խեղճ Պիտերի հայրը մենակ:

Ո՞ւմ դուռը նա յերկար թակեց,
Վհր քար սրտին դիմեց այսօր,
Քանի՞ միտաբը նրան մերժեց
Ընդունելու վորպես բանվոր:

Գուցե արդեն գործ ե գտել,
Դատարկել ե նավ մի կրկին.
Գուցե... հանկարծ ծովն ե ընկել՝
Դժբախտ ժամում գիշերային...

Յեւ յեղնում ե կինը՝ զգուշ,
Փնտռում քայլերն իր ամուսնու,
Բայց դուրսը՝ ցուրտ, ինքը՝ անուժ,
Վհղըն ե լավում միայն քամու:

Որորում ե քամին այդ խիստ՝
Հեռվի պայծառ լույսերն ահա,
Ուր կյանքն ուրախ ե, անհանգիստ՝
Պալատներում վոսկեհմա:

Այնտեղ հիմա կիները նուրբ՝
Շողշողում են մետաքսի մեջ,
Յեւ ծափերի տակ ընդհանուր՝
Պար են դառնում նազով ու պերճ...

Կես գիշերն անց՝ դուռը ճռաց,
Ու Պիտերի հայրը յեկավ.
Մի քանի խոսք նա շրջնջաց՝
Վրեժով լի ու սրտաքամ:

Յեւ անուրախ այդ տնակում,
Այնքան նման ցուրտ դագաղի,
Նա ել մտավ խռով մի քուն՝
Յերագներով դառնալեղի...

4

Պիտերն հայրիկին դարձյալ չտեսավ...
Յե՛րբ եր նա յեկել, վհր ժամին գնաց.
Չե՞ վոր որն հազիվ, հազիվ լուսացավ.
Յեւ ծագեց աղոտ մի ցուրտ այգաբաց...

Դատարկ, դատարկ եր սեղանը իրենց,
Յեւ մայրն այդ որվա նման դառնալից.
Այսօր ել նրան վոչինչ չբերեց,
Յեւ հույսը փակեց դռները նորից:

Բայց Պիտերն ուզեց վեր կենալ մի պահ,
Հավաքել գրքերն ու դպրոց գնալ,
Քաղցը չհիշել և լինել հպարտ,
Վոչ ել վորքի պես մղկտալ ու լալ...

Սակայն շուռ յեկավ սենյակը գլխին,
Ասես մշուշ—ամպ իջավ չորս—բոլոր,
Տնակն այդ դարձավ մռայլ ու մոխիր
Յեւ հոսեց—գնաց վոլոդ ու մոլոդ:

Կեսորին Պիտերն յելավ անկողնից...
Սուր ժանիքներով կատաղած գայլի՝
Քաղցը կրծհամ եր նորից ու նորից
Յեվ շուրջը նրա՝ պտույտ եր գալիս:

Գնանք, — ասում եր, — դուրսը՝ քաղաքում,
Համեղ ու անուշ հագար մի բան կա.
Կա յեվ Նդվարդենց շքեղ խանութում.
Ի՞նչ ես մտածում դու այստեղ յերկար...

Ու կանգ առավ նա հանկարծ անվարան,
Լայն, ապակեպատ մի դուռ բանալով՝
Ներս սահեց ըզգուշ ինչպես ուրվական,
Բուրավետ հացի և մարդկանց միջոցով:

Մտեցավ դողով՝ մի գեր պառավի,
Տեսավ՝ գնել է բուրավետ հացեր,
Իսկ յերբ նա թեքվեց, փոր շուրջը նայի,
Պիտերն զամբյուղից մի հաց թռցրեց...

Ու դուրս շտապեց մի ակնթարթում,
Շնչահատ մտավ մոտակա պարտեզ.
Աչքերում վառած վայրենի խնդում —
Կրծել սկսեց հացը՝ գայլի պես:

Յեվ նա չհիշեց, թե յերբ է արդյոք
Տեսել պարտեզն այդ — կանաչ ու սիրուն.
Ու թվաց նրան, փոր յերազ է սոսկ...
Ու բոլորն իր շուրջ թռչում են, պարում, —

Յերբ շառաչելով մի ապտակ իջավ
Այդ նիհար ու նուրբ մանկան այտերին,



Յեվ հացի կիսատ պատառը թռնվ
Ու արնաշագախ՝ այն ընկավ գետին...

Չտեսավ Պիտերն այդ ժամին այլևս
Ահարկու ու գարշ այն վոստիկանին,
Վոր արյունոտեց և հաց, և պարտեզ,
Յեվ զրկած իրեն՝ տարավ զայրագին...

5


Ահա՛ մահուգով սեղան մի մաքուր,
Սեղանի կողքին՝ վոստիկան հսկա,
Ու մի դատավոր մազերով գանգուր,
Յեվ յերկու միտքը՝ իբր ատենակալ...

Նայում ե Պիտերն հայացքով վայրի,
Դողում թեվաթափ թռչունի նման.
Ինչո՞ւ յեն նստել իր դիմացն հիմի՝
Սև—սաթ շորերով մարդիկ տոնական:

Բայց դատավորն այդ՝ ժպտաց «քաղցրությամբ»,
Ըզգուշ հարցերով նա գործի անցավ.
Ցրելով ահի մառախուղն ու ամպ —
Ճարպիկ ազվեսի իր մորթին հագավ:

Յեվ Պիտերն անկեղծ բոլորը ասաց,
Պատմեց իր անգործ հայրիկի մասին,
Վոր խեղճ մայրիկն ել տխուր ե, սոված,
Ու դժգույն ե հանց դալկադեմ լուսին...

— Իսկ ինչո՞ւ դու հաց գողացար, վորդիս,
Չե՞ վոր որենքով արգելված ե խիստ:



— Քաղցած եյի յես ամբողջ յերկու ուր.
Միստրը դատավոր...

Դատավորն այնժամ իր շուրջը դարձաւ,
Փսիսաց յերկու միստրներէ հետ,
Հետո ել տեղից ծանրը բարձրացաւ՝
Հայտնելով վճիռն հակիրճ, կետ առ կետ.

— Զողերով յերկաթ՝ վեց հարված դրան...

6

Պիտերին կողքի սենյակը տարան,
Ուր շիրմի նման և՛ ցուրտ եր, և՛ մերկ,
Դրին կտցած և գործիքի վրան՝
Սուլելով փայրի և տարտամ մի յերգ:

Նա տեսավ, ինչպես մի ժանտ վոստիկան
Ստուգեց ձողերն յերկաթե, փայլուն,
Յեւ վեցեց ջրով լեւիւցուն կաթսան՝
Իր խղճի ձայնին առանց անսալու...

Ու փորձեց մի պահ փախչել սենյակից,
Գլուխն ազատել գործիքից այդ սառ,
Բայց գամված եր նա իր տեղում նորից,
Կսկիծով լեցուն և ահասարսափ...

Յեւ Պիտերն ըզգաց իր մարմնի վրա
Թունազեղ ոճի կիզանուտ ցավեր,
Գոռանց... աչքերից թափվեցին արագ
Հատիկ առ հատիկ արցունքի կայծեր:

Յեւ պայթեց դրսից մի դառն աղաղակ,
Սիրտը սրաւող և ահեղ կոծում.
Այդ մեծ, մայրական սիրտն եր անխորտակ,
Վոր և՛ լալիս եր, և՛ խորն անիծում...

7

Յերեկոյան դեմ
Մանկանն այդ դժբախտ՝
Տուն բերեց մի մարդ,
Հանձնեց թախծադեմ

Մայրիկին դողուն,
Վորի կրծքի տակ
Ցավի անհատակ՝
Կայծակն եր շողում...

Նա «Պիտեր» կանչեց
Անչափ կարոտով,
Լուսեղեն խինդով...
Ասես կանաչեց

Անապատ մի չոր,
Յեւ կարմիր մի վարդ
Ծաղկեց ցողազարդ՝
Իր սրտում տոչոր:

Ու վզովն ընկավ
Կապուտաչ, խելոք
Մանկանն այդ անող—
Համբուրեց յերկար...

Իրսում թնդաց անեղ քամին,
Ծովը ծեծեց ափերն արագ,
Ի՞նչ է անում այս ուշ ժամին
Խեղճ Պիտերի հայրը մենակ...

Ո՞ւմ դուռը նա յերկար ծեծեց,
Վհր քար սրտին դիմեց նորեն,
Քանի՞ միտքը նրան մերժեց—
Դուրս անելով անգթորեն:

Ու յեղնում է կինը՝ ըզգուշ,
Փնտռում քայլերն իր ամուսնու,
Բայց դուրսը ցուրտ, ինքը՝ անուժ,
Վհղբն է լսվում դարձյալ քամու:

Որորում է քամին այդ խիստ՝
Հեռվի պայծառ լույսերն ահա,
Ուր կյանքն ուրախ է, անհանգիստ՝
Պալատներում լուսահմա...

Ուշ գիշերին դուռը ճաաց
Ու Պիտերի հայրը յեկավ,
Աչքերը խորն ու արնամած,
Վրեժով լի և բոցավառ:

Գալիս եր նա հսկա ցույցից
Ծովածավալ բանվորների,
Հավաքով լի՝ փորոտալից
Վերջին կովի ու պայքարի...

Յե՛վ անուրախ այդ տնակում,
Ուր լուռթյուն եր ու թախիժ,
Մտավ կրկին խռով մի քուն,
Յերաւներով փոթորկալից:

... Տեսավ՝ վառվում են խարույկներ
Յե՛վ ծովափին և՛ քաղաքում,
Բարձրացել են բարիկաղներ՝
Վերջին կովի մի բորբոքուն:

Գործարանից ու հանքերից՝
Շուրջը ահա հազար ծանոթ,
Վորոտում են շառաչալից
Յե՛վ գնդացիր, և՛ թնդանոթ:

Յե՛վ փլչում են իրար հետե
Պալատների սյուներն ահա,
Յե՛վ հալչում է հետզհետե
Միսալներն զորքն ու զրահ...

— Հայրիկ, — կանչեց ժիր մի տղա, —
Տես, փամփոռշտ եմ բերել ելի,
Դու վոնց կարկուտ կրակ տեղա,
Քո յեանից եմ յես գալի...

Նրանք մեզ վիշտ ու ցավ տվին,
Քաղցած թողին մեզ որերով,
Կովիր, հայրիկ իմ թանկագին,
Վոր տուն դառնանք հաղթանակով...



Արշալույսին հայրը զարթնեց
Աչքերն հույսի բոցերով վառ,
Հոգում կարմիր խարույկներ մեծ՝
Յերազի մեջ տեսած պայծառ:

Դուրսը՝ թնդում եր դեռ քամին,
Ծովը ծեծում ալիերն արագ,
Խորն յերզելով նա այդ ժամին՝
Վորոտաձայն մի յեղանակ....:

Մարտ, 1938 (Յերևան)



Պատ. խմբագիր՝ Դ. Ղազարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Դասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավիտի լիազոր՝ Բ—1031. Հրատ. 5088.
Պատվեր 871. Տիրաժ 3200.
Թուղթ 62×94. Տպագրական 1 մամուլ.
Մեկ մամուլում 24,480 նշան.

Հանձնված է տրտադրության 4 ղեկա. 1940 թ.
Ստորագրված է տպագր. 3 փետրվարի 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0405595

ԳԻՆԸ 85 ԿՈՊ.

13137

ВЕСПЕР
ШЕСТЬ УДАРОВ
Гиз Арм. ССР Ереван